ՀՏԴ 316.334.3:37.035.4

Մ.Գ. ՍԻՄՈՎՈՆՈՎԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՆՁԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ներկայացվում է քաղաքական գիտակցության դերը անձի քաղաքական «ես»-ի ձևավորման գործընթացում, անձի քաղաքական սոցիալականացման էության բացահայտումն ու արժևորումն այդ գործընթացում:

Առանցքային բառեր. քաղաքական գիտակցություն, քաղաքական սոցիալականացում, ժողովրդավարություն, քաղաքական անհատ, քաղաքական հասունություն:

Քաղաքական աշխարհի, քաղաքական անցուդարձի, քաղաքական երևույթների մասին պատկերացումները մեծապես կապված են անձի քաղաքական գիտակցության, գիտականության և քաղաքական հասունության հետ:

Քաղաքական գիտելիքների մասին պատկերացումները գալիս են դեռևս հին ժամանակներից: Արիստոտելը (Ք.ա. 483-422թթ.) քաղաքական գիտությունը մեկնաբանում է որպես գիտություններից ամենաբարձրը, քանի որ այն մարդկանց սովորեցնում է ապրել արդարության համաձայն, իրավական օրենքներով և ընդհանուր բարօրության սկզբունքներով:

Շնորհիվ Նիկոլո Մաքիավելլու՝ քաղաքական հետազոտությունները դարձան որպես ինքնուրույն գիտական ուղղություն:

Քաղաքական գիտակցությունը քաղաքական հայացքների ու գիտելիքների ամբողջությունն է քաղաքական կյանքում տեղի ունեցող երևույթների վերաբերյալ, որի շնորհիվ անձը՝ որպես քաղաքացի, գիտակցում է իր տեղն ու դերը քաղաքական կյանքում և քաղաքական գործընթացներում առհասարակ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ որքան բարձր է անձի քաղաքագիտական կրթության մակարդակը, այնքան նա գիտակցված է մասնակցում քաղաքական կյանքին, ուստի օրինաչափ է, որ այսօր բուհական տարբեր հաստատություններում դասավանդվում է «Քաղաքագիտություն» առարկան:

Ժողովրդավարական հասարակության մեջ ուսումնական հաստատություններում կարևորվում է քաղաքագիտական կրթությունը, այսինքն՝ համապատասխան քաղաքական գիտելիքների ձեռքբերումը, ինչպես նաև ժողովրդավարական նորմերի և արժեքների ուսուցումը [1:62էջ]:

Աշխարհի քաղաքական պատկերը, քաղաքական կյանքի տարբեր կողմերի արտացոլումն ու գնահատումը՝ որոշակի գիտելիքների ձևով, իրենց արտահայտությունն են գտնում «Քաղաքագիտություն» առարկայիի մեջ:

«Ամենաօգտակար օերնքներն անգամ ոչ մի օգուտ չեն տալիս, եթե քաղաքացիները էթնիկական-պետական ոգով դաստիարակված չլինեն»,-նշել է Արիստոտելը:

Որքան բարձր է անձի կրթական մակարդակը, այնքան նա քաղաքական առումով համեմատաբար գրագետ և կողմնորոշված է լինում քաղաքական գործընթացներում: Պատահական չէ նաև, որ քաղաքականապես անգրագետ մարդը արագ է ներգրավվում հասարակության կողմից անընդունելի համարվող մարգինալ (ծայրահեղական) գործընթացներում:

Հասարակական նոր հարաբերությունների արմատավորման հետ մեկտեղ հրատապ է դառնուում անհատի ինքնուրույնության և նախաձեռնության հիմնախնդրի լուծման կարևորությունը: Այս առումեվ մեծ նշանակույթուն ունի քաղաքական կրթությունը՝ անձի քաղաքական գիտակցության և սոցիալականացման գործընթացում:

«Բոլոր բարիքներից առաջինը ոչ թե իշխանությունն է, այլ ազատությունը: Այն հիմնական դրույթ է հանդիսանում: Հարկավոր է միայն այդ ազատության գաղափարը կիրառել մանկության և երիտասարդության նկատմամբ, և դաստիարակության բոլոր կանոնները դրանից կբխեն», - գրել է սոցիալական արդարության ջատագով Ժ.Ժ. Ռուսսոն [2:էջ 110]:

Սոցիալականացումը հասարակության անդամների քաղաքակրթության և քաղաքական հասունության գործընթաց է:

Սոցիալականացվելիս մարդիկ յուրացնում են վարքագծի այնպիսի նորմեր, որոնք կարևոր են անձի քաղաքական կողմնորոշումների համար: Ակնհայտ է, որ մարդիկ չեն ծնվում գիտելիքների պատրատի պաշարով: Դրանք ձեռք են բերվում ողջ կյանքի ընթացքում: Այս տեսանկյունից քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրը բացառիկ կարևորություն է ձեռք բերում [3;էջ 355-357]: Սոցիալականացումը մի կողմից՝ սոցիալական նորմերի, արժեքների յուրացումն է, մյուս կողմից՝ դրանց հիմքի վրա անձի իրական մուտքը հասարակության քաղաքական կյանք: Ժողովրդավարական արժեքները ու նորմերը կյանք չեն ստանա, եթե անձը գիտակցված կերպով չմասնակցի քաղաքական գործընթացներին:

Այսպիսով քաղաքական սոցիալականացումն ընդգրկում է բոլոր այն գործոնները, որոնք մարդուն դարձնում են քաղաքական անհատ. դրանք են՝

գիտելիքները, հայացքները, արժեքները, որոնք ունեն քաղաքական բովանդակություն: Այդ բոլորի յուրացումը անհատին հնարավորություն է տալիս դառնալու քաղաքական հարաբերությունների լիիրավ անդամ:Ինչպես նշում է ամերիակացի հոգեբան Լասսուելը, քաղաքական սոցիալականացումը դիտարկվում է որպես անցումնային գործընթաց «թերարժեքության զգացումից դեպի աստվածային բարձրություն»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Аристотель.** Политика // Сочинения: В 4-х-т (1) Т.4.-М.: Мысль, 1983.-с. 16
2. **Руссо Ж. Ж.** Пед. соч. В 2-х томах.- Т. 1.- М., 1969.-с.110.
3. Политология: Уч. Пособие / Под редакцией **Краснова Б.И**.- М.:Союз, 1995.- С. 355-357.

М.Г. СИМОВОНОВА

РОЛЬ ПОЛИТИЧЕСКОГО СОЗНАНИЯ В ПОЛИТИЧЕСКОЙ СОЦИАЛИЗАЦИИ ЧЕЛОВЕКА

Роль политического сознания заключается в формировании политического “я” человека. Выявлена и дана оценка сущности политической социализации человека в этом процессе.

Ключевые слова: политическое сознание, политическая социализация, демократия, политическая личность, политическая зрелость.

M.G. SIMOVONOVA

THE ROLE OF POLITICAL CONSCIOUSNESS IN THE POLITICAL SOCIALIZATION OF THE PERSON

The role of political consciousness is in the formation of a person's political "I".

The essence of a person's political socialization in that process is revealed and evaluated.

Keywords: political consciousness, political socialization, democracy, political personality, political maturity.